

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Արմավիրի մարզի Պտղունքի գյուղապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետի (ծածկագիր 3.1-3) համայնքային ծառայության թափուր պաշտոնի համար

Հայտատու՝ Պտղունքի գյուղապետարան

«Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդված

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Պտղունքի գյուղական համայնքի ղեկավարը հայտարարում է մրցույթ՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Պտղունքի գյուղապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության հետևյալ թափուր պաշտոնը զբաղեցնելու համար.

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՈՒՆՔԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ

#### ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏ

(ծածկագիր 3.1-3)

Առաջատար մասնագետը՝

- ✓ Աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ աջակցում է գորակոչի, գորահավաքների, ուսումնավարժական հավաքների իրականացման աշխատանքներին:
- ✓ Աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ աջակցում է քաղաքացիական պաշտպանության մարմինների գործունեությանը:
- ✓ Աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ մասնակցում է համայնքի բնակչության, հատկապես երիտասարդական ռազմահայրենասիրական դաստիարակչությանը:

- ✓ Իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ: Առաջատար մասնագետն ունի օրենքով , այլ իրավական ակտերով նախատեսված իրավունքներ և կրում է այդ ակտերով նախատեսված պարտականություններ:

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է ունենալ.

- ✓ Միջնակարգ կրթություն
- ✓ ՀՀ Սահմանադրության, «Համայնքային ծառայության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Զին. պարտության մասին», «Զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի մասին», «Ռազմական դրության մասին», Հայաստանի Հանրապետության օրենքների, Աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն,ինչպես նաև տրամաբանելու,տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն
- ✓ Համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

Մրցույթին մասնակցելու իրավունք ունեն ՀՀ քաղաքացիները և Հայաստանի Հանրապետությունում փախստականի կարգավիճակ ունեցող անձիք:

Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը.

ա) գրավոր դիմում հանձնաժողովի անունով՝ նշելով պաշտոնը,որին հավակնում է դիմողը

բ) համայնքային ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով այդ պաշտոնն զբաղեցնելու համար քաղաքացու մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետմանը ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի պատճենները՝ ատեստատ (ները), դիպլոմ (ները), վկայական (ները), աշխատանքային գրքույկ (աշխատանքային գրքույկի բացակայության դեպքում տեղեկանք համապատասխան մարմնից)

զ) հայտարարություն այն մասին, որ ինքը չի տառապում Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թ. դեկտեմբերի 15-ի թիվ 1801-Ն որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով

դ) հայտարարություն այն մասին, որ ինքը դատական կարգով չի ճանաչվել անգործունակ կամ սահմանափակ գոծունակ

ե) «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի «ե» ենթակետի պահանջը բավարարելու նպատակով արական սեռի անձիք ներկայացնում են նաև զիվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասային կցագրման վկայականի պատժենները կամ համապատասխան տեղեկանք

զ) մեկ լուսանկար (3×4 չափսի)

է) անձնագրի պատճենը

Մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը ներկայացնել անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող փաստաթղթերով: Լրացուցիչ տեղեկություններ ստանալու ,ինչպես նաև պաշտոնի անձնագրին ծանոթանալու համար կարող են դիմել Պտղունքի գյուղապետարանի աշխատակազմ (հասցե՝ ՀՀ Արմավիրի մարզ, Պտղունք համայնք, Հ.Շիրազի փող. թիվ 23, էլ. հասցե՝ [ptghunq.armavir@mta.gov.am](mailto:ptghunq.armavir@mta.gov.am), հեռ.՝ 0 93 133-833, 0 231 6-35-50) , կամ ՀՀ Արմավիրի մարզապետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ վարչություն (հասցե՝ ք. Արմավիր 71, հեռ.՝ 2-76-49, 2-07-70), ամեն օր ժամը 9<sup>00</sup>-ից 16<sup>00</sup>-ը, բացի շաբաթ, կիրակի և տոն օրերից:

Ներկայացվող փաստաթղթերի պատճենների հետ միասին անհրաժեշտ է ներկայացնել նաև դրանց բնօրինակները: Ներկայացված փաստաթղթերի պատճենները ետ չեն վերադարձվում:

Մրցույթը կկայանա 2015 թվականի ապրիլի 20-ին ժամը 11<sup>00</sup>-ին:

Դիմումների ընդունման վերջնաժամկետն է 2015 թվականի ապրիլի 1-ը:

**Պտղունք համայնքի ղեկավար՝**

**Կ. Արթենյան**